նական քննութեան է դրուում երեք նիստում։ Թեր եւ դէմ կողմերը, այդ երեք նիստերի ընթացքում, իրաւունք ունին վիճել, ճառել եւ իրենց տեսակէտները պաշտպանել։ Չորրորդ նիստում օրինագիծը դրուում է քուէի. կողմերը պատասխանում են միայն «այո՛» կամ «ո՛չ», եւ խնդիրը լուծուում է ձայների հասարակ մեծամասնութեամբ, թէկուզ մէկ ձայնի առաւելութեամբ (ժէ)։

Բոլոր պատգամաւորներն ունին մէկ–մէկ ձայն, բացի Հանրապետութեան նախագահից եւ հոգեւորականութեան ներկայացուցչից, որոնք երկ–երկու ձայն ունին, որովհետեւ նրանք ունին «պատիւ զօրութեան երկու արանց» եւ «երկու կամք» (ժէ, մլգ, մխդ)։

Այս ամբողջ գործողութեան ընթացքում անյայտ է, թէ ի՛նչ ճանապարհով են անցնում օրինագծերը մինչեւ ազգ. ժողովի քննութեան հանելը — արդեօք յատուկ օրէնսդրական յանձնաժողովների մէ՞ջ են մշակուում նրանք եւ նրանց կողմից պարլամենտ մուծուում. դիւանի կամ Հանրապետութեան նախագահի կողմի՞ց են առաջարկուում, թէ՞ իւրաքանչիւր պատգամաւոր վայելում է օրէնքի նախաձեռնութեան իրաւունքը։

Հեղինակի ընդհանրապէս ազատախոհ մտքերից թերեւս կարելի էր եզրակացնել, որ ամէն մի պատգամաւոր ունի օրինագծեր առաջարկելու իրաւունքը, թէեւ այդ մասին ոչ մի ակնարկ անգամ չենք նկատում «Որոգ. Փառաց»ի մէջ։ Սակայն դրա հետ միասին՝ աւելի հաւանական է ենթադրել, որ Հանրապետութեան նախագահը — կամ աւելի ճիշդ՝ գործադիր իշխանութիւնը — պէտք է լինի օրինագծեր ներկայացնող գլխաւոր հիմնարկութիւնը։

Մեզ թւում է, որ Հանրպ. նախագահին կից եղած 12–ի խորհուրդը, օրէնքների մեկնաբանութեան հետ միասին — նման ռուսական Կառավարիչ Սենատին — գլխաւորապէս այդ պարտականութիւնը պիտի ունենայ, որովհետեւ նախ՝ այդ խորհրդին ուրիշ ոեւէ յատուկ գործառնութիւն չի վերապահուած, բայց եթէ յիշեցնել նախագահին «հայոց անխախտելի օրէնքները». երկրորդ՝ խորհրդի անդամներից պահանջուող յատկութիւններն այդ են ապացուցում — «հեզ, երկայնամիտ, տէր պատուոյ, սիրող ազգին եւ աշխարհին հայոց, առաքինութեամբ զարդարեալ, քաջախոհեան» (ծը, խթ)։ եւ երրորդ՝ մինչդեռ բոլոր պաշտօնները երեք տարով են, խորհրդի անդամներն ընտրուում են ցմահ, ուրիշ խօսքով՝ նրանցից պահանջուում է աւելի փորձառութիւն եւ խղճի անկախութիւն ու գործելու աւելի ազատութիւն։ Իսկ մենք գիտենք, որ Շահամիրեանի կարծիքով՝ օրէնքն է այն դեղթափը, բուժիչ պանասէն, որ փրկութիւն եւ երջանկութիւն պիտի բերէ հայ ժողովրդին։ հետեւապէս այդ օրէնքը մշակողներն ու առաջադրողները պէտք է լինեն ոչ սովորական պաշտօնեաներ եւ գործեն բոլորովին այլ պայմաններում։

Հայոց ազգ. ժողովի պատկերը լրացնելու համար՝ շատ հետաքրքրական է, թէ մեր հեղինակը ի՞նչպէս է իրեն պատկերացնում «Հայոց Տունը» եւ նրա մէջ տիրող կարգ ու սարքը։

Ազգ. ժողովի շէնքը կառուցուում է երկրի ամենաամուր նահանգներից մէկի մայրաքաղաքում, ուր գտնուում է նաեւ Հանրպ. նախագահի ապարանքը։ «Հայոց Տունը» պաշտպանուած է զօրեղ պահակով։ Նրա մէջ կայ մի «խորան» կամ դահլիճ, արեւելքից արեւմուտք ձգուած։ Դահլիճում, արեւելեան կողմում, շինուած է երկու աստիճան, որոնցից առաջին աստիճանի վրայ դրուած է Հանր. նախագահի աթոռը։ Նրանից դէպի աջ, երկրորդ աստիճանի վրայ, դրուած է դիւանի անդամներից տանուտէր արք. եպիսկոպոսի աթոռը եւ այնուհետեւ, ներքեւում, միւս պատգամաւորներից կէսի աթոռները, իրենց թիւերի կարգով։ Նախագահի աթոռից դէպի ձախ, երկրորդ աստիճանի վրայ, գտնուում է դիւանի երկրորդ տանուտէր–անդամի աթոռը, նրա կողքին երրորդը, իսկ այնուհետեւ, ներքեւում, պատգամաւորներից մնացած կէսի աթոռները, կրկին թիւերի կարգով դրուած։

Իւրաքանչիւր պատգամաւոր ունի մի անդամ ընդ միշտ որոշուած ու համարակալուած իր աթոռը։ Դահլիճի ճակատում բազմում է Հանրապետութեան նախագահը, ամենաբարձր աստիճանի վրայ։ Նրա առջեւ դրուած է մի սեղան, վրան թաղ եւ սուսեր։ Արք–եպիսկոպոս տանուտէրի առջեւ եւս գտնուում է մի փոքրիկ